

Իսկ Յայտնութեան եւ անոր քառասնից, Տեառնընդառաջի, Առաջաւորաց աւարտման, Աղուհացից միջնոց, Ղազարու, Աւագ հինգշարաթու, Չատկի երկշարաթու եւ Համբարձման տօներուն համար կը սահմանէ՝ որ « ի վանս ուխտաւորեալ տեղիսն երթիցէ նախանն հանապազ », որպէս զի տեղւոյն պաշտօնեայք եւ հիւրերն ու տենն (111-2): Կային նաեւ « պատարագք հասարակաց », ուսկից ի միասին պիտի վայելէին քահանայք ու վանականք, առանց յատուկ բաժիններ առնելու (113): Այսպէս նաեւ Քարեկենդանի, Ծաղկազարդի, Առաքելոց ու Մարգարէից տօներու կամաւոր մատաղներն « հասարակաց » կը թողու (114): Նմանապէս Նորեաց տօնին ճաշն (աստ, 317) « առ հասարակ երրիցեն, կ'ըսէ, ամենայն պաշտօնեայք » առանց զանազանութեան (113):

Տարբեր բաժանում մը կը գտնենք Աշտարակեցւոյն կանոնաց մէջ: Հոն զլիաւոր քահանայք մատաղէն պիտի առնուն երկուք ու կէս մասն, եւ միւս քահանայք՝ երկու երկու սարկաւագունք՝ մէկ ու կէս, եւ զպիրք ու պարկեշտ այրիները մի մի մասն (ԺՎ): — Սոյն կանոնք աւելի հետաքրքրականը կ'աւանդեն. մատաղի անասունք երբեմն ողջ ողջ կ'երթային քա-